

# սղսղսղսղ...

Posted on June 15, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



**Ռուբեն Յովակիմեան, Փարիզ, 2 Յունիս 2018**

**«Ներողամիտ լերուք սխալանալս»**

Եղաւ, ինչ որ պիտի լինէր: Բազում էին սպասողները, բայց անյայտ ու զանազան պատճառներով լռում կամ շշուկով էին խօսում բոլորը, մինչեւ այն օրը, երբ Նիկոլ Փաշինեանը իմաստութիւնը, քաջութիւնը կամ պարտականութիւնը (չասենք հրամանը) ունեցաւ կայծ տալու վառօդին՝ եւ տեղի ունեցաւ պայթիւնը:



Պայթուցիկը անշուշտ տասնամեակների ընթացքին երկրում տիրող ու կրկնուող ոչ-յարիր քաղաքա-տնտեսական մթնոլորտն էր, որ արդէն տուն ու տեղ արած ձեւաւորուել է պարտադրուել էր իշխող կալային դասակարգի կողմից: Առանց վարանելու կարելի է ասել, թէ նախկինները վստահ էին, որ ամէն ինչ թույլատրելի է եւ մոռանալու նրանց կարողութիւնը այնքան հզօր էր, որ չէին յիշում իրենց պարտականութիւնները՝ ժողովուրդի եւ տիրացած պաշտօնների հանդէպ՝ մինչեւ այն օրը, երբ յարմար առիթով շատերը ոտքի ելան՝ մէկ մարդու նման:

**Ռուբեն Յովակիմեան, Փարիզ, 2 Յունիս 2018**

**«Ներողամիտ լերուք սխալանալս»**

Եղաւ, ինչ որ պիտի լինէր: Բազում էին սպասողները, բայց անյայտ ու զանազան պատճառներով լռում կամ շշուկով էին խօսում բոլորը, մինչեւ այն օրը, երբ Նիկոլ Փաշինեանը իմաստութիւնը, քաջութիւնը կամ պարտականութիւնը (չասենք հրամանը) ունեցաւ կայծ տալու վառօդին՝ եւ տեղի ունեցաւ պայթիւնը:



Պայթուցիկը անշուշտ տասնամեակների ընթացքին երկրում տիրող ու կրկնուող ոչ-յարիր քաղաքա-տնտեսական մթնոլորտն էր, որ արդէն տուն ու տեղ արած ձեւաւորուել է պարտադրուել էր իշխող կալային դասակարգի կողմից: Առանց վարանելու կարելի է ասել, թէ նախկինները վստահ էին, որ ամէն ինչ թույլատրելի է եւ մոռանալու նրանց կարողութիւնը այնքան հզօր էր, որ չէին յիշում իրենց պարտականութիւնները՝ ժողովուրդի եւ տիրացած պաշտօնների հանդէպ՝ մինչեւ այն օրը, երբ յարմար առիթով շատերը ոտքի ելան՝ մէկ մարդու նման:

Գաւաթը լեփ-լեցուն էր եւ վերջին կաթիլը, որ բազմաբովանդակ էր՝ նախորդ նախագահների «իմաստուն եւ ազգանուէր» գործունեութեամբ, դժուար էր կուլ տալ:

Մենք պիտի չփորձենք գնահատականներ տալ անցածի մասին եւ միեւնոյն ժամանակ չենք խորասուզուի բերկրաթմբի (Euphorie-էֆօրիայի) մէջ ապագայի տեսլականով, քանզի ամէն ինչ սեւ եւ ճերմակ չէ եւ ըստ երեւոյթին անսպասելի ակնկալութիւններ դեռ

## Կարող եսք ունենալ:

Մամուլը եւ հասարակական գործիչների մի մասը եղած երեւոյթը գնահատում են յեղափոխութիւն, այն էլ պարուրելով «Թաւշեայ կամ մետաքսեայ» ածականով, ինչպէս մի քանի տարի առաջ մեր յարգելի հարեւան վրացիները հպարտութեամբ նախընտրում էին «Վարդի յեղափոխութիւն» եզրը Էդուարդ Սահակաշուհիի անփառունակ գլխաւորութեամբ եւ նոյնքան արդիւնքով: Յուսանք եւ աղօթենք, որ մեր երկրում նոյնը չի լինի եւ մերոնք առաւել շրջահայեաց կը լինեն: Արդար լինելու համար խոստովանենք, որ դեռ կանուխ է արդիւնքներ սպասել եւ նրանց արժէք տալ, բայց ակնյայտ են գործելակերպը եւ ընթացքի ուղղութիւնը, որ որոշ յույսեր են ներշնչում, եթէ խանգարող ուժեր մեջտեղ չգան: Պետք է անհրաժեշտ ժամանակը տալ նոր համակարգը գործի դնելու եւ ինչո՞ւ չէ վարժուելու եւ փարձառութիւն ձեռք բերելու համար, բայց պէտք չէ հրաշքների սպասել, քանզի այն տեղի չի ունենայ: Փակագծի մէջ յիշեցնենք, որ ճիշտ տասը տարի առաջ, երրորդ նախագահի ընտրութեան առիթով, բաց նամակ ուղղեցինք նրան՝ մեր հայ լինելու իրաւունքով եւ ոչ թէ դաս տալու նպատակով, նշելով, որ ժամանակը հասուն է մեր երկրի իշխանութեան կառոյցը մօտեցնել կամ նմանեցնել սինգապուրեան կարգավիճակին (Système) ուր կարծես չկան ո՛չ կաշառակերութիւն եւ ո՛չ էլ սակագնային պաշտօններ:

Մեր տպաւորութիւնը այն է, թէ նոր կառավարութեան քայլերը գնում են այդ ուղղութեամբ: Չնայած յայտարարուեցաւ, թէ «Vendetta» չի լինելու, բայց դա ոչ մէկ ձեւով չի նշանակում, որ պիտի լինի համընդհանուր ներում բոլոր տեսակի յանցագործութիւնների ու չարաշահումների նկատմամբ:

## Ո՛չ: Երիցս ո՛չ:

Երկրի շահերին դիպչելը համազօր է դաւաճանութեան եւ այն պիտի պատժուի օրէնքի կատարեալ խստութեամբ, նամանաւանդ երբ այն խմբակային (կլանային) բնոյթ է կրում եւ այն պիտի կատարուի միայն եւ միայն պատկան իրաւական մարմինների նախձեռնութեամբ եւ պատշաճ պատասխանատուութեամբ: Մեր հայրենաբնակներից ոմանք սկսել են անհատական հաշուեյարդարներ ձեռնարկել համարելով, որ իշխանափոխութիւնը տալիս է այդ իրաւունքը: Որպէս ցնցող օրինակ է պետական համալսարանի տնօրէնի աշխատասենեակի գրաւումը եւ նրա նկատմամբ անվայել վերաբերմունքը՝ ընդհուպ նրան մինչեւ հիւանդանոց տեղափոխելը: Կարծում եմ ավելորդ է նման արարքներ ներկայացնելը, քանզի նրանք բազում են եւ բազմաբովանդակ, եւ հայրենի լրատուամիջոցները առատութեամբ սպասարկում են:

Մեր նոր պետական այրերը իրենց գործողութիւնների վեհութեան եւ արժանապատուութեան անհրաժեշտութեան մասին պիտի լրջօրէն մտածեն եւ անհանգստանան:

## Հենց այնպես ոչինչ չի լինում:

